

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/3

4 սեպտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով <Ֆյուքս> ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 17.08.2012թ. թիվ 2115255 ստուգման ակտի դեմ 21.08.2012թ-ին բերված դիմում-բողոքը և վերջիններիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 31.07.2012թ. թիվ 2115255 հանձնարարագրերի համաձայն <Ֆյուքս> ՍՊԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է Արաբկիրի ՀՏ 17.08.2012թ. թիվ 2115255 ստուգման ակտը:

<Ֆյուքս> ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 17.08.2012թ. թիվ 2115255 ստուգման ակտի դեմ 21.08.2012թ-ին բերվել է դիմում-բողոք: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 04.09.2012թ-ի գրությամբ Ընկերության տնօրենը բերել է միջնորդություն, որով խնդրել է, որպեսզի Արաբկիրի ՀՏ 17.08.2012թ. թիվ 2115255 ստուգման ակտի դեմ 21.08.2012թ-ի դիմում-բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ Ընկերության 21.08.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, <Ֆյուքս> ՍՊԸ 21.08.2012թ. դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ